ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«28» 11 2024թ. N 24/11-12

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«Վեբստարտ» ՍՊ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ

Գնման ընթացակարգի ծածկագիր՝ ՄՍԾ ԳՀԽԾՁԲ-25/7

Մասնակից՝ «Վեբստարտ» ՍՊ Ընկերություն

/ՀՎՀՀ՝ 00482555, ՀՀ ք. Երևան, Ոսկերիչների 2/9, հեռ. 043534534, info@webstart.am /

Միասնական սոցիալական ծառայության կարիքների համար ծրագրային ապահովման սպասարկման խորհրդատվական ծառայությունների գնման նպատակով 05.11.2024թ. հայտարարվել է ՄՍԾ ԳՀԽԾՁԲ-25/7 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին հայտ է ներկայացրել «Վեբստարտ» ՍՊ ընկերությունը: Գնահատող հանձնաժողովի 13.11.2024թ.-ին կայացած նիստում «Վեբստարտ» ՍՊ ընկերության հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ հրավերով սահմանված պահանջների նկատմամբ:

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ հրավերով սահմանված կարգով հանձնաժողովի նիստը կասեցվել է մեկ աշխատանքային օրով և հնարավորություն է տրվել մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Հրավերով սահմանված ժամկետում «Վեբստարտ» ՍՊ ընկերությունը գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին չի ուղարկել հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունների շտկված տարբերակները՝ պիտանելիության չափորոշիչի փաստաթղթերը, դիմում-հայտարարությունը՝ (հավելված 1), աշխատակազմի վերաբերյալ տեղեկանքը համաձայն հավելված N 1.1-ի, հրավերի 1-ին մասի 2.7 կետով սահմանված ոչ գնային պայմանների գնահատման համար որակավորումը հավաստող փաստաթղթերը:

Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով վերոգրյալը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների

գործընթացի կազմակերպման» կարգի Հավելված N 1-ի 42-րդ կետով և ՄՍԾ ԳՀԽԾՁԲ-25/7 ծածկագրով հրավերի 1-ին մասի 2.7 կետի և 8.10 կետի պահանջներով, հայտի գնահատման արդյունքների ամփոփման նիստում որոշել է «Վեբստարտ» ՍՊ ընկերության ներկայացրած հայտը գնահատել անբավարար և մերժել ընկերության կողմից ներկայացրած հայտը՝ «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով սահմանված պահանջի համաձայն, հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմնավորմամբ՝ հայտ չի համապատասխանում հրավերով սահմանված հայտերի կազմման և ներկայացման պահանջներին՝ կարգի 41-րդ կետով և հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում չեն շտկվել արձանագրված անհամապատասխանությունները:

Գնանշման հարցման ընթացակարգը հանձնաժողովի որոշմամբ հայտարարվել է չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա:

Ըստ այդմ՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ մասի իրավակարգավորմամբ և հիմք ընդունելով «Վեբստարտ» ՍՊ ընկերության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու հիմքով տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցման փաստը՝ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացրել հրավերով նախատեսված շտկման ենթակա փաստաթղթերը, որը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում մասնակցի ստանձնված պարտավորության խախտում, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցման.

Որոշեցի՝

Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «Վեբստարտ» ՍՊ ընկերությանը ներառելու համար դիմել լիազորված մարմին՝ համապատասխան գործընթացի կազմակերպման համար:

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

Ստորագրող
ԱՇՈՏ ԱՐՇԱԿՅԱՆ
3708660056

2024-11-28 10:39:06 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Ա. ԱՐՇԱԿՅԱՆ